Գևորգ Էմին

Չգիտեմ սա խինդ է իսկական

Չգիտե՛մ, սա խա՞նդ է իսկական,
Թ՞ե փորձում,
Կամ… կատա՞կ ես անում._
Չժպտա~լ այս չքնաղ աղջկա՞ն
Ու չերգե՞լ…
Դու ա՞յդ ես ցանկանում.
Իսկ գիտե՞ս, թե ու՞մ ես դու սիրում
Եվ ու՞մ ես անվանում լոկ.. քոնը,_
Նա երգի ակու~նքն է աշխարհում՝
Ինչպես ծո՛վն,
ա՛րևն
ու կոկո՛նը…
Այն ո՞վ է Լուսաստղով հմայվում
Եվ նրան արգելու~մ… երգ ձոնել.
Աղբյուրի ակունքից ջու՛ր խմում
Եվ գրում՝ .
Ասում թե՝
,
Ներանց պես՝
նա վե~ր է բոլորից,
Մի սիրո համար նա… ավե՛լ է…
Թե իրավ նրա՛ն ես դու սիրում,
Սիրի~ր,

Բայց մի՛ կիտիր նոթերըդ,_
Ես երգի իմ բաժի~նն եմ խլում՝
Քոնը քե՛զ կմնա, Օթե՛լլո: